

## ԳԵՐԵՆԻԿ ԳԵՄԻՐՃՅԱՆԸ ՄԱՄՈՒԼԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### Բ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. Դեմիրճյանի կապը մամուլի հետ լայն ընդգրկում ունի և սերտորեն առնչվում է հրապարակախոսի գրական-հասարակական և քաղաքական գործունեության հետ: Լայն էր նրա հետաքրքրությունների շրջանակը. ակնարկներ, գրախոսություններ, ֆելիետոններ, հոգեբանության ու մանկավարժության պրոբլեմներին նվիրված հոդվածներ, ճանապարհորդական նոթեր և այլն: Գ. Դեմիրճյանը հետաքրքրությամբ հետևում և եռանդով աշխատակցում էր մամուլի տարբեր օրգաններին: Պարբերականներում սուպերված նրա միայն հրապարակախոսական ելույթների թիվը հասնում է 400-ի:

Հանդես գալով տասնիններորդ դարի 90-ական թվականներին, սուպերվում էր առաջին բանաստեղծությունները Ավետիք Արախանյանցի «Մուրճ» ամսագրում, նա անօրինակ կամբռով ու հավատով անցավ բոլոր արձավիրքներն ու հասավ քսաներորդ դարի հիսունական թվականներ և «Պոններ կանչ» թերթի էջերում խոսեց իր արդեն լեզվենդ դարձած մանկության և ընկերների մասին:

Երկտասարդ բանաստեղծը սուպերվում էր «Մուրճ», «Տարագ» ամսագրերում, իսկ «Արձագանքում» երևում էին նրա փոքրիկ հոդվածները՝ հայկական մշակութային կյանքի մասին: Դեմիրճյանը Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերությունում աշխատելու տարիներին մասնակցել է նույն հիմնարկի աշխատակից Հայկ Պողոսյանի հիմնադրած ընդհատակյա ձեռագիր «Բանվոր» թերթի աշխատանքներին, որի պատճառով, ի թիվս ուրիշների, 1901 թ. փետրվարի 25-ին ոստիկանության կողմից ենթարկվել է խուզարկության<sup>1</sup>: 1907—1913 թթ. նա հանդես է եկել նաև «Հուշարար» պարբերականում, որը զգալի դեր խաղաց ժամանակի թատերական կյանքի, թատրոնի անցյալի լուսաբանման գործում, նպաստեց բեմադրվեստի առաջընթացին:

Աշխատավորների զաղափարական դաստիարակության, նոր հասարակարգի կառուցման գործում կարևոր նշանակություն ստով գրականությանն ու արվեստին, կուլտուրական շինարարության ասպարեզում կուսակցության վարած քաղաքականության անշեղ կենսագործմանը, Գ. Դեմիրճյանը այստեղ ևս խոշոր դեր էր հատկացնում մամուլին: Նա գտնում էր, որ մամուլը չի կարող անուշադրության մատնել նոր գեղարվեստի ստեղծման խնդիրը, բանի որ մշակույթի ասպարեզը երկու տարբեր զաղափարախոսությունների բախման հիմնական ոլորտներից մեկն է: Այս բմբռնման կոնկրետ արտահայտություն էին մասնավորապես նրա այն ելույթները մամուլում, որոնք ուղղված էին ռարվեստը արվեստի համար տեսության և բուրժուական ռեակցիոն քննադատության դեմ<sup>2</sup>:

Ակտիվորեն հանդես գալով մամուլում՝ գրողը սիրով էր ղատարում խմբագրությունների պատվերները, մասնակցում կազմակերպվող գրական ասուլիսներին, բանավեճերին: Իսկ շատ դեպքերում էլ ինքն էր խմբագրություններին առաջարկում հուզող թեմաներ:

Գ. Դեմիրճյանի հրապարակախոսական և ժուռնալիստական եռանդուն աշխատանքը սերտորեն միահյուսված էր նրա գրական-գեղարվեստական գործունեության հետ: 1925 թվականից, Թիֆլիսից Երևան տեղափոխվելուց հետո, նա զբաղվում է նաև լրագրական գործունեությամբ: Պարբերական մամուլի էջերում նա շարունակ հոդվածներ էր սուպերվում կյանքի ամենատարբեր խնդիրների շուրջը: Նա այն համոզմունքն ուներ, որ գրողը մինչև չապրի բուն կյանքով, չհասկանա կյանքի ներքին տեղաշարժերը, չի կարող շունչ տալ նաև իր գեղարվեստական կտավներին: Գ. Դեմիրճյանին խորթ էր «առանձնասենյակային գրող» ըմբռնումը: Նա գտնում էր, որ գրողը մշտապես կարիք ունի ներքին տապալակի, կյանքի թռչուրճի հետ

<sup>1</sup> Տե՛ս Հ. Մուրադյան, Գերենիկ Դեմիրճյան, Եր., 1961, էջ 22:

<sup>2</sup> Տե՛ս «Նոր աշխարհ», Թիֆլիս, 1922, № 1:

ամենօրյա շփումներին: Իսկ դրա հարմարագույն ձևը պարբերական մամուլն էր, որի հավատարիմ ղեկավորը նա մնաց մինչև կյանքի վերջը:

Իրողը, խոսելով մամուլի առանձնահատկությունների, գրականության և մամուլի փոխադարձ կապի ու խնդիրների մասին, կատարում է խոր և օգտակար վերլուծություններ, որոնք այժմ էլ արժեքավոր են ու գնահատելի սովետական գրականության ու ժուռնալիստիկայի համար: 1932 թ. գրած «Քեմատիկայի խնդիրը» հոդվածում Գ. Գեմիրճյանը, խոսելով սոցիալիստական շինարարության, նոր մարդու, հնգամյակների հերոսի, հարվածային բանվորի, կուտնտեսականի, կոմունիստի, սոցիալիստական շինարարությանը նվիրված գիտնականի, կուլտուրայի գործչի, կոմերիտականի մասին, նշում է, որ դրանք պետք է դառնան ոչ միայն գրականության, այլև մամուլի հերոսներ: Եվ քանի որ «նոր կյանքի խնդիրները մեծ են և նորօրինակ,— գրում է Գեմիրճյանը,— և յուրաքանչյուր օր նրանք ծառանում են այնպիսի բազմակողմանի վարարությանը, որ մի գրող մենակ իր ուժերով անկարող է ընդգրկել: Այստեղ գրողի համար խոշոր դեր է կատարում մամուլը, որը որոշ շահով նաև առաջնորդող դեր ունի գրականության մեջ»: Եվ ապա ավելացնում է. «Մամուլը շատ զգալիորեն է վերափոխում մեր իրականությունը: Եվ գրականությունը նրա զորեղ ազդեցության տակ է»<sup>3</sup>:

Իհարկե, վերջիվերջո գրականության և մամուլի առանձնահատկությունները խորապես տարբեր են: Չկա մի երևույթ, որ գրականությունից առաջ մամուլը շոշափած չլինի: Այս միտքն է հայտնում նաև Գեմիրճյանը. «Մամուլը գրողին ընձեռում է բազմազան, հարուստ թեմաներ: Եվ եթե առայժմ գրողն առանց մամուլի բավականին դժվար կացության մեջ կլինի, ապա գրականությունը ձգտում է ստեղծել իր սպեցիֆիկայի համար հարմար վիճակ: Նրա ստեղծագործական պրոցեսը պահանջում է յուրահատուկ մեթոդ՝ կյանքի ուսումնասիրության և վերարտադրության»<sup>4</sup>:

Գ. Գեմիրճյանի նպատակը չի եղել հոդվածում նույնացնել մամուլի և գրականության գործը, նման փորձ նա չի կատարել, բայց շատ հետաքրքիր և ուսանելի դատողություններ է արել մամուլի և գրականության փոխհարաբերության հարցերի շուրջ: Եվ դա աննպատակ չի եղել: «Քեմատիկայի ընտրության խնդրում, անգամ ստեղծագործական մեթոդների խնդրում մամուլի դերը մնում է տիրապետող: Սա գրականության թեմատիկայի խնդրում մտցնում է իր առանձնահատուկ բնույթը և ազդում է նրա վրա»<sup>5</sup>,— գրում է Գեմիրճյանը: Ընդգծելով, որ գրողի համար խոշոր դեր է կատարում մամուլը, որը և առաջնային դեր ունի գրականության մեջ, Գեմիրճյանը գրում է. «Տեղյակ պահելով, մատնացույց անելով, թե ուր կարելի է դիմել մեր իրականության ուսումնասիրության խնդրում դուրացնելով գրականության աշխատանքը՝ (մամուլը) ամեն օր գրական ասպարեղ և նետում բազմաթիվ հում նյութերից բացի նաև կիսաօչերկներ, օչերկներ, գրականության «կիսաֆարրիկատներ»: Այդ կիսամշակված նյութը դնում է շատ անգամ գրականության գործարանը՝ դառնալով ավելի բարդ ու կատարյալ մշակված արդյունք»<sup>6</sup>:

Մամուլի դերն, իհարկե, շատ մեծ է գրողի՝ ժողովրդական զանգվածների հետ խոսելու առումով: Այն շատ ավելի ներգործուն է, անմիջական, հետևողական, քան, ասենք, որևէ գեղարվեստական գործի թողած ազդեցությունը: Պատճառն, իհարկե, այն է, որ «մամուլը գործի, ակտի, «մարդ է»: Նա գերադանցապես տենդենցիոզ է, «կրքոտ»:

Գեմիրճյանը ժամանակին նկատում է մի բացասական երևույթ սովետահայ գրականության մեջ՝ կապված մամուլի հետ. «Քյանի որ նա (սովետահայ գրականությունը— Ռ. Գ.) այժմ գերազանցապես մամուլի ազդեցության տակ է և կարոտ է նրա ամենօրյա օժանդակության,— գրում է Գեմիրճյանը,— նա յուրացնում է, առանց նկատելու այդ, նաև մամուլի այն առանձնահատկությունը, որ գրականության մեջ արդիական խոշոր խնդիրն է, սխեմատիզմը»<sup>7</sup>:

Ըստ Գեմիրճյանի, սա, իհարկե, մամուլի մեղքը չէր, մամուլը չէր, որ թելադրում էր այդ «սխեմատիզմը»: «Գրականությունը պետք է կարողանա,— գրում է Գեմիրճյանը,— տվյալ հում թեմայի գեղարվեստական մշակման մեջ ազատվել սխեմատիկ կառուցվածքից ու լուսաբանություններից»<sup>8</sup>:

Բացի սխեմատիզմից այդ շրջանի գրականությանը հատուկ էր նաև կրկնությունը, որ նո-

<sup>3</sup> Գ. Գեմիրճյան, Երկերի ժողովածու, Եր., 1963, հ. 8, էջ 46:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 48:

րից մամուլից էր մուտք գործել գրականություն: «... Առայժմ դա ևս, (նոր գրականության թեմատիկան— Ռ. Գ.) բազմակողմանի չէ,— գրում է Գեմիրճյանը:— Ավելի է սանձը՝ բազմակողմանի չի մշակվում: Անգամ թողնում է այն տպավորությունը, որ կարծես շատ է կրկնվում միևնույն թեմատիկան և իրոք բազմաթիվ օշոկներ, պատմվածքներ, վեպեր, պիեսներ գրազված են կենտրոնական տիպի նոր մարդու պատկերացումով: Ուրեմն սխեմատիզմին զալիս ավելանում է մի նոր երևույթ ևս:— Կրկնությունը»<sup>9</sup>:

Դրա պատճառներից մեկն այն է, որ ինչպես գրականությունը, այնպես էլ մամուլը ձրգտում են ներկայացնել նոր մարդուն, խորանալ նրա կերպարի մեջ: Եվ քանի որ պրոլետարական գրականության թեմատիկան հարուստ է, ուստի և գրողները, և մամուլի աշխատողները պետք է ձգտեն գտնել ինքնուրույն թեմաներ, որոնք կրկնությունների քիչ տեղիք տան: Դա կհարստացնի նաև գրականության և մամուլի պատմությունը:

Քննանքի ամենահարուստ շտեմարանը Գեմիրճյանը համարում էր կյանքը, սակայն գրությունում էր, որ հարկավոր է լրջորեն յուրացնել այն, ապա նոր միայն նստել գրասեղանի առաջ: Իսկ յուրացնել՝ նշանակում է կյանքի մեջ թափանցել այն աստիճան, որ տվյալ վայրը, մարդիկ, դեպքերը, գաղափարները դառնան պատկերներ, կերպարներ, հույզեր: Քեմայի ընտրության գործում հարկավոր է հաշվի առնել նաև օրվա պահանջները, հարկավոր է կապել այն կյանքի հետ, այլապես՝ թեման կհնանա, կկորցնի իր ուժը:

Ըստ Գեմիրճյանի, եթե գրականության մեջ պատկերվում է և հինն ու նորը, և երեկն ու այսօրը, և, որ պակաս կարևոր չէ, «կանխագուշակում» է վաղը, ապա մամուլը միշտ պետք է լինի առաջին շարքերում, գրի մարդու այսօրվա և վաղվա, նորի և առաջավորի մասին: Դա հնարավորություն է տալիս ասելու, որ մամուլը կյանքի հայելին է՝ բարդ կյանքի պարզ հայելին: Նա գտնում էր, որ կյանքի բարդությունը պետք է արտացոլվի վեճավորությամբ, որը և մամուլը կդարձնի յայն մասանների սեփականությունը:

Մամուլը կոչված է նաև արձագանքելու նոր ստեղծագործություններին, գրականության ու արվեստի բոլոր կարևոր երևույթներին, տալու նրանց գնահատականը, օգնելու ինչպես հեղինակներին, այնպես էլ ընթերցողներին՝ ճշտորեն կողմնորոշվելու ստեղծագործությունների գրեհատման գործում: Նա գտնում էր, որ դրանով մամուլը կարող է հուշել գրողին, թե մեր իրականության որ բնագավառը կարելի է ուսումնասիրել և դարձնել գրականության նյութ:

Գ. Գեմիրճյանը այն կարծիքին էր, թե չկա առավել հատու ու ճշմարիտ գեներ, քան մամուլի հզոր գեներ: Դեռևս 30-ական թվականներից նա դառնում է մամուլի էջերում բացված բանավեճերի ակտիվ մասնակիցը, անդրադառնում իրականության ամենաբազմազան հարցերին: Նա գտնում էր, որ մամուլը պետք է ուշադրության կենտրոնում պահի արագ զարգացող կյանքը, ժամանակի հետ կապված գրողը, ժուռնալիստը պետք է փնտրի ու գտնի կյանքի ու մարդկանց կապի ամենաբնորոշ գծերը, կարողանա հասկանալ նրանց հոգեբանությունը, տեսնել էականը: Ժուռնալիստը չպետք է կողքից սպասի հարմար պահի, այլ պետք է մտնի կյանքի հորձանուտը, մասնակցի իրադարձություններին, հասկանա, իմաստավորի և ճշմարտացիորեն ներկայացնի այն: Իրականության, կյանքի ճիշտ իմաստավորումը պետք է լինի մամուլի ամեն մի աշխատողի պարտականությունը:

Գեմիրճյան-հրապարակախոսի հողվածներում կյանքն արտացոլվում էր ճշմարիտ մեկնալսականությամբ: Նա խորհուրդ էր տալիս մամուլի աշխատողներին՝ սովորել կյանքից, թափանցել մարդկանց ներաշխարհը:

Վերոհիշյալ հողվածում, առանձին ելույթներում, մամուլի ասուլիսներում, Գեմիրճյանը քննության հարց է դարձրել նաև ակնարկի և պատմվածքի ժանրային առանձնահատկությունները: Քանի որ ակնարկը նաև լրագրային ժանր է, ուստի նա քննում է ակնարկի ու պատմվածքի՝ որպես իրականության գեղարվեստական արտացոլման միջոցների առանձնահատկությունների հարցը՝ ընդգծելով մեկի բացառապես փաստական, մյուսի հիմնականում հնարովի հիմքերը: Նա նշում է. «Ակնարկի հեղինակը չի խորանում հերոսի հոգեբանության, ներքին էության նրբությունների աշխարհը և նրա մասին շարադրելիս չի հասնում համամարդկային ընդհանրացումների: Ակնարկի հերոսը կերպար չի դառնում, այլ հանդես է գալիս իր էության և արտաքին աշխարհի հետ հարաբերության մակերեսային նկարագրությամբ միայն»<sup>10</sup>:

Ակնարկը հաստատուն տեղ է գրավել Գեմիրճյանի ընդհանուր գրական-ստեղծագործական կյանքում: Վ. Բելինսկիի գրել է, որ ակնարկն ինքնուրույն տեղ ունի գեղարվեստական գրականության ժանրերի շարքում: Բազում վեճերի առարկա դարձած այս դրույթն այժմ անհերքելի

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Գ. Գեմիրճյան, Արկերի ժողովածու, հ. 3, էջ 208:

Էջմարտություն է. վերջապես ակնարկն ազատվում է գրականության «խորթ» զավակի պիտակից: Միանգամայն պարզ է, որ ակնարկը ոչ թե ապագայում ստեղծվելիք գեղարվեստական երկի նախագիծն է, էսքիզը, ոչ թե կիսահումք կամ էլ նկարագրային ժանրի մի տարբերակ, այլ ակնխի, իր «գեղարվեստական գագաթները», իր գեղագիտական շափանիշներն ունեցող ժանր:

Գեմիրճյանը անդրադարձել է ակնարկագրության համարյա բոլոր տեսակներին՝ ակնարկ-դիմանկար, սոցիալ-սոստեսական ակնարկ, օրագրային ճանապարհորդական նոթեր և այլն, Ակնարկի տարատեսակներին այսպես ազատ տիրապետելը լայն հնարավորություն է տալիս հեղինակին բացահայտելու իր քաղաքացիական կիրքը, հրապարակախոսային ուղղվածությունը: Հայտնի է, որ ակնարկագիրը պետք է նկարագրվող իրադարձությունների ակնանտեսը լինի և այդ պատճառով էլ նա, ինչպես գրում է Մ. Գորկին, «բրավունք չունի սխալվելու իր հերոսի անգամ աչքերի գույնի մեջ»: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե ակնարկագիրը լուր փաստագրողի դերում է հանդես գալիս: Գեմիրճյանն իր ակնարկներում հմտորեն գուգակցում է փաստի նկարագրությունը գեղարվեստական հորինվածքի հետ, սակայն երբեմն խախտվում է ակնարկի և պատմվածքի սահմանագիծը, և որոշ ակնարկներ պատմվածքի տեսք են բնդունում: Գեմիրճյան-ակնարկագիրն իր հերոսներին փնտրում է հասարակ մարդկանց մեջ, «հետազոտում» ուսմի դաշտի մարտիկներին, հողի աշխատավորին, թունելագործ բանվորին, հիդրոկայան կառուցողներին:

Մ. Գորկին նշում է, որ ակնարկն առաջին հերթին հետազոտություն է: Եվ իրոր: Ցուրաբանչուր գրող իր հոգու գաղտնարանում միշտ պահպանում է նվիրական, անմոռանալի մի ինչ-որ բան, որը չի կարող իրեն զգացնել շտալ, շարտահայտվել նրա ստեղծագործության մեջ:

Գեմիրճյանի համար այդ «ինչ-որը» հայ ժողովրդի պանդխտության թեման է, մարդու ճակատագիրը, նոր կառուցվող իրականությունը: Հայ ժողովրդի ճակատագրով ու նորօրյա կյանքով ապրող հրապարակախոսի մտորումները դրոշմվել են նրա երկերում: Ինչպես արձակ ստեղծագործություններում, այնպես էլ հրապարակախոսության մեջ ընդգծված է հեղինակի անսահման նվիրվածությունը և կրքոտ սերը հայրենիքի նկատմամբ: Այդ ապրումները, իղձերն ու խոհերը երևան էին գալիս մամուլի էջերում տպագրված նրա ակնարկներում, հողվածներում: Գրանք իրենց արտացոլումն են գտել հեղինակի «եռոր գիտակցեցրեց նոյնմերի նշանակությունը»<sup>11</sup>, «Գեպի պատմական պատասխանատու գործ»<sup>12</sup>, «Նոր կյանքի, նոր սերնդի պայքար հանուն մեր հոյակապ հայրենիքի»<sup>13</sup>, «Հայրենի դաշտերից»<sup>14</sup>, «Մայր Հայաստան»<sup>15</sup> և այլ հողվածներում ու ակնարկներում: Նրա ակնարկներում զուգակցվում են մյուս էպիկական ժանրերի գաղափարա-գեղարվեստական տարրերը, իսկ ընդհանուր առմամբ նրանք ավելի մոտ են քնարական ակնարկի տեսակին:

Ինչպես նշում է Գեմիրճյանը, պատմվածքը նույնպես կարող է իր նյութը վերցնել իրականությունից, սակայն այն դեպքում գրողը, շեղվելով իրական փաստերից, պատկերների, կերպարների հոգեբանական զարգացման միջոցով կատարում է բնորոշ տիպական բնութագրումներ:

Ուրեմն ստեղծագործելիս, իրականությունը գեղարվեստորեն վերարտադրելիս ժուռնալիստը պետք է լավ ճանաչի իրականությունը և այն դիտի ոչ թե որպես առանձին-առանձին դրվագներ, այլ տեսնի շարժումը, հասկանա դրանց իմաստը:

Կյանքի խորթափանց ճանաչողությունը ժուռնալիստին հնարավորություն է տալիս բազմաթիվ երևույթներից առանձնացնել առողջը, առաջնայինը, ժխտել արատավորը: Նա գտնում է, որ իր կոշմանն արժանի լինելու համար մամուլի առաջին և ամենակարևոր նախապայմանը պետք է լինի ժամանակի հետ համընթաց քայլելու կարողությունը:

Գ. Գեմիրճյանն իր հողվածներում և առանձին ելույթներում արծարծել է նաև մամուլի աշխատողների ստեղծագործական մեթոդների ու ձևերի հարցը: Նա նշում է՝ որպեսզի մամուլում հրապարակված հողվածը լինի ուշագրավ, մատուցվի թարմ ու հետաքրքիր ձևերով՝ ստեղծագործողը պետք է օժտված լինի «ներքին նախապաշտությանը, ունենա ոգենշնչող ազրույր»: Գրողի «Հերոսական սիմֆոնիա» հողվածը նվիրված է Մյասնիկյան-հրապարակախոսին: Բնութագրելով Մյասնիկյանին որպես մամուլի կազմակերպիչ, հեղինակը նկատել է նաև Մյաս-

<sup>11</sup> «Եռօրհրդային Հայաստան», 1934, № 274:

<sup>12</sup> «Գրական թերթ», 1938, № 20:

<sup>13</sup> «Գրական թերթ», 1939, № 6:

<sup>14</sup> «Սովետական գրականություն», 1942, № 7, էջ 65—69:

<sup>15</sup> «Սովետական Հայաստան», 1945, № 6, էջ 28—29:

նիկյան-հոետորի հատկանշական գիծը: Հողվածում ասվում է. «Նրա խոսքը թարմ էր, որովհետև հստակ գալիս էր գործի փորձից, որովհետև գործի խոսք էր: Ահա ինչու նա համոզիչ էր ու հուսադրող: Մամուլով հետաքրքրվելու և ղեկավարելու համար ժամանակ չէր խնայում»<sup>16</sup>:

Գրողն այն միտքն է հայտնում, որ մամուլի աշխատողը, ստեղծագործողը չի կարող ձեռք բերել ծայծ նստել և սպասել ոգևորության: Տրամադրություն ստեղծվում է աշխատանքում, շփման մեջ, առօրյա կյանքում: Կյանքն է, որ տալիս է մտքեր, թեմաներ, նյութեր: Ստեղծագործական պրոցեսը, Գեմիթրեյանի բնութագրմամբ, ունի հետևյալ էտապներ՝ մտահղացում, նախապատրաստություն և գրելն ու շարահյուսելը: Սովետական ժուռնալիստի ստեղծագործական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է, որը ճշմարտացիորեն գնահատում է իրականության փաստերը, տեսնում կյանքի զարգացման ներքին բովանդակությունը, առաջընթաց շարժումը:

Ստեղծագործական աշխատանքի ընթացքում ժուռնալիստը պետք է կարողանա «թափանցել մարդկային հոգևրանության խորքերը» քաջ գիտակցելով, որ ամենազիջվողը կյանքի իսկական ճանաչումն է: Իսկ այդ ամենը, ըստ Գեմիթրեյանի, պահանջում է «մեծ ու լարված աշխատանք»:

Գեմիթրեյանի հատուկ է նուրբ դիտողականությունը: Մի բան, որ ժուռնալիստի համար կենսականորեն անհրաժեշտ է: Միայն դրանով է, որ նա ճանաչում է աշխարհը, մարդկանց, տարբերում վատն ու լավը, բնդունում օրինակելի: Տեղին է նկատել Ավ. Իսահակյանը՝ Գեմիթրեյանն ունի «դիտող, սուր աչք»: Ավելի լավ է մի անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել մի բանի մասին: Այս սկզբունքով էր նա մոտենում մամուլի աշխատանքին:

Մամուլի խնդիրների մասին խոսելիս Գեմիթրեյանն աչքաթող չէր անում նաև լեզվի հարցը: Չնայած այն բանին, որ նա մամուլի լեզվի հարցին վերաբերող առանձին հոդվածներ չի գրել, բայց մայրենի լեզվի զարգացման, հայ գրական լեզվի հեռանկարների, գրական լեզվում բարբառներից և օտար լեզուներից կատարվող անցումների և փոխառությունների, գեղարվեստական գրականության և գրական լեզվի զարգացման հեռանկարների, դպրոցի, ուսուցչի, թատրոնի, լեզվի մասին գրված հոդվածներում, ելույթներում անդրադարձել և քննության է առել նաև մամուլի լեզվի հարցը:

«Ժամանակակից հայ գրական լեզվի դարգացման տեսնողները» հոդվածում Գեմիթրեյանը գտնում է, որ հայ գրողները «... անել, ապրել են մամուլի ու քաղաքական գործունեության մեջ, նրանք ուսուցիչը եղել է ժուռնալիստիկան, նրա ուժեղ դպրոցը, ապա միայն՝ գրականությունը, որն ավելի ուժեղ չի եղել, քան մամուլը և քաղաքական գործունեությունը»<sup>17</sup>:

Անդրադանալով մամուլի և գրականության լեզվի փոխհարաբերության հարցերին, Գեմիթրեյանը բուրբուն էլ այն կարծիքին չէր, որ դրանք իրար հետ կապ չունեն, և արհեստականորեն մամուլի ու գրականության լեզուների բաժանում չէր անում: Նա ընդունում էր, որ մամուլի լեզուն օգնել է մեր գրողներին, բայց հորդորում էր ընդհանրապես նաև այն, որ գրողներն են ստեղծում մամուլի լեզուն և ինչ-որ ժամանակ էլ գրականությունը չի կարող բավարարվել մամուլի լեզվով: Քանի որ գրականությունն ունի իր հատուկ պահանջները, ուստի նրա լեզուն պատկերավոր է: Իսկ եթե կան գրողներ, որ մնում են մամուլի լեզվի սահմաններում, ապա դա ոչ մամուլի և ոչ էլ գրականության մեղքն է: Նա մայրենի լեզվի մաքրության և հարստացման պահանջը դնում էր նաև մամուլի առջև:

Խոր ձեռքերով շրջանում էլ գրողը լեզուն էր ավելումով, կյանքի ու շրջապատի նկատմամբ բավականորեն հետաքրքրություններով: Մի գրույցի ժամանակ այն հարցին, թե ինչն է ամենից շատ հետաքրքրում իրեն, Գեմիթրեյանը պատասխանում է. «Այն ամենը, ինչ կամեր շուրջը, ներշնչում է ինձ: Պետք է տեսնել, գիտենալ, անշուշտ նայել՝ գիտենալու պայմանով»<sup>18</sup>:

Գեմիթրեյանը դեպքերի ու փաստերի սոսկ վկա ու արձանագրող չէր, այլ դրանց իրականացման համար մարտնչող, պայքարող մարդ: Նա մամուլի աշխատողներից պահանջում էր գրել միայն ճշմարտությունը: Պատմելը դեռևս բավարար չէ, մամուլի աշխատողը պետք է մարդկանց նախապատրաստի հետագա մեծագործությունների, նշի նաև ապագայի ուղիները: Նրա ամեն տողի մեջ պետք է տրոփի ժամանակի զարկերակը:

Գ. Գեմիթրեյանի արխիվում պահպանվում են օրվա թերթերի բազմաթիվ օրինակներ, թերթերից հանված հոդվածներ, ակնարկներ, պատմվածքներ, լուրեր, որոնք պատմում են երկրի

<sup>16</sup> «Նոր ակոս», 1925, № 5—6—7:

<sup>17</sup> Գ. Գեմիթրեյան, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 396:

<sup>18</sup> Բ. Զարյան, Հուշապատում, Եր., 1975, էջ 108:

ժողովրդական տնտեսության և կուլտուրայի նվաճումների, արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորների փորձի, մարդկանց կյանքի ու աշխարհայացքի մասին: Պահպանված հոդվածների վրա նա կատարել է որոշ դիտողություններ, մակագրություններ, նշումներ: Այստեղից էլ երևում է, թե գրողը որքան կարևորություն է տվել մամուլին, նրան շատ են հետաքրքրել հատկապես կենցաղային թեմաները: Ժամանակակիցների վկայությամբ նա նյութեր է հայտարարել նույնիսկ ասորյա խոսակցությունների ժամանակ: «Հետո կխոսեմ և թվում է, թե միայն կխոսեմ, բայց ոչ, նա միաժամանակ գրի էր առնում ինչ որ խոսվում էր, ոչինչ բաց չէր թողնում, ոչ մի բան չէր մոռանում, առավել ևս այն, ինչ իրեն պետք է,— հիշում է թատերագետ Ս. Մելիքսեթյանը: Անգամ ժողովում նստած ժամանակ լսելով ուրիշներին, նա գրի էր առնում սրամիտ մտքեր, բառեր, տողեր, կուրյոզներ ու հետո օգտագործում»<sup>19</sup>: Այդ հավաքած մտքերի ու նյութերի հիման վրա էլ հետագայում ստեղծվել են երգիծական մանրապատումները, ֆելիտոնները, երգիծական հոդվածները:

Դեմիրճյանն ունենալով գեղարվեստական խոր զգացողություն, սուր դիտողականություն ու բարձր երևակայություն իր առաջ քաշած հարցերով ու մտքերով խոշոր դեր կատարեց մամուլի աշխատանքների կազմակերպման գործում: Բացառիկ նշանակություն տալով մամուլին, նա զգալի ջանք ու եռանդ է հատկացրել պարբերականների աշխատանքի բարելավմանը, գաղափարական մակարդակի բարձրացմանն ու գործնական դերի ուժեղացմանը: Ինչպես նշել է «Խորհրդային Հայաստան» թերթը, Դեմիրճյանը մեծ հետաքրքրությամբ է հետևել մեր մամուլին և խոշոր մասնակցություն ունեցել նրա աշխատանքներին<sup>20</sup>:

Ամփոփելով, կարող ենք ասել՝ մամուլի և նրա աշխատողների մասին Դեմիրճյանի դասերը, որոնք սփռված են նրա հոդվածներում, զեկուցումներում և ելույթներում, ոչ միայն գրողի կենսագրության ուշագրավ դրվագներից են, այլև յուրահատուկ ավանդ հալ ժուռնալիստիկայի զարգացման գործում:

**Р. Г. ДАВТЯН — Дереник Демирчян о задачах печати.** — Выдающийся писатель Дереник Демирчян тесно сочитал свое художественное творчество с литературно-общественной и политической деятельностью публициста. Его перу принадлежит около 400 публицистических выступлений, очерков, рецензий, фельетонов, статей, посвященных проблемам психологии и педагогики, путевых заметок и т. д. Коротко охарактеризовав связанную с печатью деятельность Демирчяна, автор приходит к заключению, что она принадлежит не только к интересным страницам биографии писателя, но и является своеобразным вкладом в дело развития армянской журналистики.

<sup>19</sup> Ս. Մելիքսեթյան, Անտիպ հուշեր Գ. Դեմիրճյանի մասին: Պահվում է հեղինակի անձնական արխիվում:

<sup>20</sup> «Խորհրդային Հայաստան», 1935, № 69: